ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Արենի համայնք
ՀՀ, Վայոց ձորի մարզ, գ.Արենի, 0281-6-00-01, arenigyux@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 16-Ն

ԱՐԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՏԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ԱՎԵԼԱՑՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԱՅԻՆ ՄԱՍՈՒՄ ՀՈԴՎԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերով, Արենի համայնքի ավագանին ***որոշում է՝***

Տալ համաձայնություն

1. Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից հատկացված 446 000 ՀՀ դրամը ավելացնել Արենի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի եկամտային մասի՝ Արենի այլ ոչ հարկային եկամուտներ գործառնական դասակարգման 28 բաժնի, 50 խմբի, 00 դասի եկամտատեսակում և նշված գումարը ուղղել.

ա) Սոցիալապես անապահով անձանց աջակցություն գործառնական դասակարգման 10 բաժնի 07 խմբի 01 դասի 4729 (այլ նպաստներ բյուջեից) հոդվածին,

բ) Վերը նշված գումարը վերաբաշխել Արենի համայնքի Արփի բնակավայրում արջից տուժած քաղաքացիներին՝ որպես վնասի փոխհատուցում (կցվում է տուժած քաղաքացիների ցուցակը):

2. Արենի համայնքի 2020թվականի տարեկան բյուջեի վարչական մասի արտադպրոցական դաստիրակություն գործառնական դասակարգման 09 բաժնի 05 խմբի 01 դասի 4637(ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին) հոդվածից պակասեցնել 300 000 ՀՀ դրամ և նշված գումարը ուղղել ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ գործառնական դասակարգման 01 բաժնի 06 խմբի 01 դասի 4657 (այլ կապիտալ դրամաշնորհներ) հոդվածին՝ Ագարակաձոր բնակավայրում ֆուլլեր տնաշինական կենտրոնի կողմից կառուցված բնակելի տան համաֆինանսավորման նպատակով:

Կողմ -9 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՄՀԵՐ

ԱԼԱՎԵՐԴՅԱՆ ՋԱՆԻԿ

ԱՆՏՈՆՅԱՆ ՇԱՀԵՆ

ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՆՈՒՇԱՎԱՆ

ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԱՐԾՐՈՒՆԻ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ԻՇԽԱՆ

ԿԱՐԱՊԵՏՅԱՆ ՍԱՇԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ԷԴԻԿ

ՍԻՄՈՆՅԱՆ ՄԱՌԼԵՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՀՈՒՍԻԿ ՍԱՀԱԿՅԱՆ**